

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՆԱ ԱՇՈՏԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ԼԵԶԿԱԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ
(ամերիկյան բանաստեղծական նմուշների հիման վրա)

Ժ.02.07-«Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:


Գիտական ղեկավար՝	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա . Ի. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Պաշտոնական	բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ Ա. Հ. ԶԻՎԱՆՅԱՆ
ընդդիմախոսներ՝	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Բ. Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Առաջատար կազմակերպություն՝	Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013 թ. հունիսի 8-ին, ժամը 10:30-ին, ՀՀ ԲՈՀ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Գերմանական լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցե՝ Երևան, Ալեք Մանուկյան 1:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. հունիսի 6-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
բ.գ.դ., պրոֆեսոր՝



Ե.Լ.ԵՐԶՆԿՅԱՆ

ԱՆՆԱ ԱՇՈՏԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Գեղարվեստական գրականության ուսումնասիրությունը հասել է վիթխարի նվաճումների: Սակայն այդքանով հանդերձ՝ դեռ կան շատ հարցեր, որոնք պատշաճ ուշադրության չեն արժանացել, համակողմանիորեն չեն լուսաբանվել և երբեմն էլ նույնիսկ շարունակում են մնալ վիճահարույց: Լեզվական արտահայտչամիջոցների ամբողջական ուսումնասիրության կարոտ հարցերից է հատկապես կրկնությունը: Ինչ խոսք, կրկնության մասին մեզանում քիչ չի գրվել, սակայն ձեռքբերումներն այս ոլորտում դեռևս բավարար չեն: Յուրաքանչյուր ուսումնասիրող, ելնելով նյութի պահանջից, քննության է ենթարկել լեզվական այս ուրույն հնարը՝ հարցի մեկնումը համապատասխանեցնելով իր աշխատության ընդհանուր ուղղվածությանը: Եվ արդյունքում կրկնությունը ներկայացված է կա'մ հնչյունային, կա'մ բառային, կա'մ շարահյուսական մակարդակներում և այն էլ իր ոչ բոլոր դրսևորումներով: Ավելացնենք նաև, որ լեզվաբանական գրականության մեջ լիարժեք չի ներկայացված հատկապես կրկնության շարահյուսական հնարի արժեքն ու նշանակությունը:

Հարկ է նշել, որ կրկնության վերաբերյալ բազում աշխատություններում արված դիտարկումներն էլ սահմանափակվել են հարցի քննության մասնավոր կտրվածքով, որի արդյունքում կրկնության որոշ դրսևորումներ քննությունից դուրս են մնացել: Ավելացնենք նաև, որ չնայած ժամանակակից ուսումնասիրություններում կրկնությունը դիտվում է որպես մտածողության յուրահատուկ ձև, որը ուսումնասիրության առարկա է լեզվաբանության, փիլիսոփայության, հոգելեզվաբանության բնագավառներում, այնուամենայնիվ, խնդրի լեզվաբանատեղծական կողմի համակրմանի քննությունը անհրաժեշտ լուսաբանում չի ստացել: Հետևաբար, այս հնարը կարոտ է լուսաբանման և աշխատանքի **արդիականությունը** պայմանավորված է հենց այդ անհրաժեշտությամբ:

Կրկնությունը համամարդկային լեզվամտածողության հնագույն ձևերից մեկն է, որը դարեր շարունակ եղել է բազմաթիվ ակնառու մտածողների ուշադրության կենտրոնում:¹

¹ Պողոսյան Պ.Մ. Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Ի.Ի. Երևան, 1991// Bullinger E. Figures of Speech in the Bible, Cosimo, Incorporated, 2012 // Miller J.H. Fiction and Repetition: Seven English Novels. Cambridge, HarvardUniversityPress, 1982.

Ներկա ատենախոսության մեջ լեզվական այս հնարի ուսումնասիրությունը կատարվում է միայն պոեզիայի շրջանակներում, քանզի կրկնությունը առավելապես բնորոշ է չափածո խոսքին, որտեղ այն նպաստում է ստեղծագործության ընդհանուր գեղագիտական ազդեցության ապահովմանը, հանդես գալիս որպես տարբեր կերպարների բնութագրման միջոց և ստեղծագործության բանաստեղծական ընդհանուր մթնոլորտը ձևավորող հնար:

Հետազոտության նյութն ընտրված է 19-20-րդ դարերի ամերիկյան ականավոր բանաստեղծների՝ Ուոլթ Ուիթմենի, Էմիլի Դիկինսոնի, Ռոբերտ Ֆրոսթի ստեղծագործություններից, որտեղ կրկնությունը ձեռք է բերել առանցքային նշանակություն: Այն նպաստում է ոչ միայն ռիթմի ու ներդաշնակության դրսևորմանը, այլև արտահայտում բարձր բարոյական արժեքներ՝ իմաստություն, բարոյախոսություն, մարդկային ամենատարբեր հոգեվիճակներ ու տրամադրություններ: Կրկնության կիրառումը սերտորեն կապված է այս հեղինակների աշխարհայացքի, ներաշխարհի և ավելին՝ դարի սոցիալ-քաղաքական դիրքորոշումների հետ: Հիրավի, նրանց պոեզիան կրկնության արվեստի բարձրակետն է, որով և պայմանավորված է հեղինակների՝ մեր ընտրությունը:

Ամերիկյան պոեզիայի այս բացառիկ ներկայացուցիչները կրկնության հնարին դիմում են օգտագործելով բանաստեղծական խոսքում արդեն քննություն բռնած կրկնության հանրածանոթ ձևերը՝ դրանք հարստացնելով նոր գույներով ու երաժշտականությամբ, ավելին՝ նրանց խոսքում անգամ կետադրությունը, քերականական դրսևորումները ստանում են ոճական լիցքեր, որոնք է՛լ ավելի են հագեցնում նրանց խոսքը և այն դարձնում վերամբարձ:

Այսպիսով սույն աշխատության *նպատակն է՝*

- ուսումնասիրել կրկնությունը չափածո խոսքում, առանձնացնել այն դրսևորումները, որոնք հեղինակի անհատական ոճի բաղկացուցիչ տարրեր են,
- պարզաբանել դրանց գործառական առանձնահատկությունները
- բացահայտել սույն հնարի լեզվաբանաստեղծական արժեքը գեղարվեստական ստեղծագործության բարդ և բազմատարր համակարգում,
- քննության առնել կրկնության գրեթե բոլոր դրսևորումները հնչյունային, բառային, ինչպես նաև շարահյուսական մակարդակներում,

- կատարել զուգադրական վերլուծություն և գտնել կրկնություն ոճական հնարի համարժեքները, ինչպես նաև վեր հանել բնագրի և թարգմանության միջև գոյություն ունեցող անհամապատասխանությունները որպես միջմշակութային հաղորդակցության խոչընդոտ և պարզաբանել, թե որքանով են բանաստեղծությանը բնորոշ հնարներն իրենց արտացոլումը գտել թարգմանության մեջ,
- շեշտը դնել կրկնության այն անհամարժեք տարրերի վրա, որոնց վերհանումն ու քննությունը կնպաստեն չափածո խոսքարվեստի թարգմանության թե՛ գործնական և թե՛ տեսական դրույթների առավել ամբողջական իմաստավորմանը:

Հետազոտության **գիտական** նորույթն այն է, որ սույն ատենախոսությունը չափածո խոսքում կրկնության հնչյունային, բառային և շարահյուսական մակարդակներում կիրառվող դրսևորումների առաջին ամբողջական քննությունն է, որտեղ կրկնությունը ոչ միայն նպաստում է տեքստի գեղագիտական մթնոլորտի ապահովմանը, այլև հանդես է գալիս տվյալ դարաշրջանի սոցիալ-քաղաքական, հոգեբանական, բարոյախրատական գաղափարների կրողը, այսինքն՝ այս ինքնատիպ հնարը ձեռք է բերել ոչ միայն լեզվական, այլև արտալեզվական գործառույթներ: Այստեղ չափազանց կարևորվում է կրկնության դերը շարահյուսական մակարդակում. մի խնդիր, որին մինչ այժմ պատշաճ ուշադրություն չի դարձվել:

Տեսական առումով սույն հետազոտությունը հնչյունային և բառային մակարդակներում հանդես եկող կրկնությունների ամբողջական ուսումնասիրություն կատարելու փորձ է՝ ընդ որում շեշտը դրվում է մի կողմից դրա գործառության, մյուս կողմից՝ ընկալման և մեկնաբանման խնդիրների պարզաբանման ու զարգացման վրա: Տեսական դրույթները իրենց նպաստը կարող են բերել ոճագիտության, տեքստի մեկնաբանության, գործառական ոճագիտության զարգացման գործին:

Ատենախոսության **գործնական** արժեքը պայմանավորված է նրանով, որ հետազոտության եզրակացություններն ու մեկնաբանությունները կարող են կիրառվել լեզվաբանության բնագավառի այլ հետազոտական աշխատություններում, նաև ուսումնական դասընթացներում: Անշուշտ, բարձրացված հարցերի պարզաբանումը կարևոր գեղարվեստական խոսքի՝ մասնավորապես չափածո խոսքի առավել համակողմանի ընկալման և գնահատման համար:

Հետազոտության **մեթոդները.**

Տվյալ աշխատությունը կատարվում է զանազան մեթոդների հաճադրմամբ: Նախ և առաջ՝ մենք դիմում ենք տեքստի վերլուծության

հերմենևտիկական մոտեցմանը, որի կիրարկումը հնարավորություն է ստեղծում բացահայտելու բառարվեստի ստեղծագործության յուրահատուկ ձևերը, վեր հանելու նրա գեղագիտական արժեքը, տվյալ դեպքում, կրկնության վերլուծության ճանապարհով:

Այս մոտեցումը խնդիր է դնում ոչ միայն ուսումնասիրել ստեղծագործության գեղագիտական ներգործուն ուժը մարմնավորող տարբեր լեզվական միջոցների ամբողջությունը, այլև վերջիններիս քննության ճանապարհով ներթափանցել հեղինակի մտահղացումների աշխարհը, ծանոթանալ նրա աշխարհայացքին ու գեղագիտական ուղղվածությանը, բացահայտել նրա գեղարվեստական մտածողության մեխանիզմներն ու նրա վերաբերմունքը կուլտուր-մշակութային ավանդույթների նկատմամբ:

Իսկ վերլուծության լեզվաոճական, լեզվաբանաստեղծական և գուգադրական մեթոդների համադրման նպատակն է քննել այս հնարը՝ վեր հանելու վերջինիս էական ու գործառական առանձնահատկությունները բառարվեստի ստեղծագործության մեջ՝ տվյալ դեպքում չափածո խոսքում:²

Աշխատանքի կառուցվածքը.

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից և եզրակացությունից: Ներածության մեջ ընդհանուր գծերով ներկայացվում են ուսումնասիրության հետ կապված հիմնահարցերն ու խնդիրները, վերլուծության մեթոդները: Հիմնավորվում են նաև թեմայի ընտրությունը, արդիականությունը և նորույթը, որոշարկվում ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները:

Առաջին գլխում՝ *«Կրկնության ուսումնասիրության մեթոդաբանական հիմքերը»*), ուսումնասիրվում են կրկնություն հնարի մեկնաբանություններն ու գրականության մեջ առկա տեսությունները, ինչպես նաև հնչյունային և բառային մակարդակներում տեղ գտած կրկնությունների ընդհանուր բնութագիրը, որոնք առաջադրվել են բազմաթիվ լեզվաբանների կողմից:

Կրկնությունը եղել է ոչ միայն լեզվաբանների, այլ նաև փիլիսոփաների, հոգելեզվաբանների, իմաստաբանների և մի շարք այլ բնագավառի մտածողների ուշադրության կենտրոնում:

Բազմաթիվ գիտական մեկնություններում, ինչպես նաև հնագույն շրջանում տարբեր լեզուներով արձանագրված հուշարձաններում

² Гаспарян С.К. Сравнение как изъяснение в научной речи и как средство лингво-поэтического творчество в художественной литературе, М., МГУ, 1994.

կրկնության տարաբնույթ դրսևորումները համարվել են համամարդկային լեզվամտածողության արտահայտություն: Դրա վառ ապացույցն է Աստվածաշունչը, որը հեղեղված է կրկնության բազմապիսի նմուշներով: Կրկնությունը իր ցայտուն դրսևորումն է գտնում թե՛ հնչյունային, բառային, շարահյուսական և թե՛ ձևաբանական մակարդակներում:

Հնչյունային կրկնություններն իրենց ամենատարբեր զուգորդումներով մարդկային վերաբերմունքի ու տրամադրության արտահայտման ձևեր են:

Լեզվի հնչյունային մակարդակում կրկնության տարատեսակներն են առձայնույթը, բաղաձայնույթը, կոնսոնանսը, հանգը:

Բառային կրկնությունները գեղարվեստական խոսքի կարևոր տարրեր են. դրանց դրսևորումները խիստ բազմազան են (երկրորդում (epizeuxis), շրջում (Antimetabole), համաստիճանություն (Anadiplosis), բաժանում (Paradiastole), օղակ (Epanadiplosis), հարակրկնություն (Anaphora), վերջույթ (Epiphora), բազմահոլովություն (Polypoton), բաղ-հյուսում (Symploce) և այլն), որոնք ծառայում են գեղագիտական մի շարք նպատակների իրականացմանը:

Կրկնությունը շարահյուսական մակարդակում իրացվում է նախադասության անդամի կամ անդամների և նախադասության հարակից միավորների մեկից ավելի անգամ արտահայտվելու ձևով: Այս ինքնատիպ հնարը շարահյուսական մակարդակում ունի բազմապիսի իրացումներ՝ պայմանավորված շարահյուսական կառուցվածքի հնարավորությունների անսահմանափակությամբ: Կրկնվում են նախադասության գրեթե բոլոր անդամները, անգամ նախադասության անդամ չհանդիսացող կամ նախադասության հարակից միավորները, բարդ նախադասության բաղադրիչները և անգամ ինքնուրույն բաղադրիչները:

Երկրորդ գլուխը վերնագրված է **(«Կրկնությունը որպես բանաստեղծական խոսքի անքակտելի տարր»)**, որտեղ բազմակողմանիորեն ուսումնասիրվում են ամերիկյան բանաստեղծների ստեղծագործություններում տեղ գտած կրկնության ինքնատիպ դրսևորումները և այն բոլոր հնարավոր գործառնությունները, որ կրկնությունը ձեռք է բերում դրանց համատեքստում:

19-րդ դարի վերջում ամերիկյան գրականությունն առանձնացավ շնորհիվ այնպիսի մեծությունների, ինչպիսիք են Ուոլթ Ուիթմենը, Էմիլի Դիկինսոնը, Ռոբերտ Ֆրոսթը և մի շարք այլ բանաստեղծներ, որոնք «հեղափոխեցին» գրականության ողջ ընթացքը՝ առաջ քաշելով նոր գաղափարներ, բանաստեղծական նոր կառույցներ: Այստեղ իր մեծ ավանդն ունեցավ հատկապես Ուոլթ Ուիթմենը, որն «ազատագրեց»

ամերիկյան պոեզիան «եվրոպական լծից» և ստեղծեց բոլորովին նոր՝ ամերիկյան պոեզիա:³

Բանաստեղծական ինքնատիպ կառույցը՝ վեր լիբրը և լեզվական արտահայտչամիջոցներից կրկնությունը, նրանց ձեռքում դարձան «հզոր գործիք» ոչ միայն խոսքը գեղեցիկ և վերամբարձ դարձնելու համար, այլև հանդիսացան իմաստության, բարոյախոսության, դարաշրջանի սոցիալ-քաղաքական գաղափարները կրողներ:⁴ Այսպես.

*WILD, wild the storm, and the sea high running,
Steady the roar of the gale, with incessant undertone muttering,
Shouts of demoniac laughter fitfully piercing and pealing,
Waves, air, midnight, their savagest trinity lashing,
Out in the shadows there milk-white combs careering,
On beachy slush and sand spirits of snow fierce slanting,
Where through the murk the easterly death-wind breasting,
Through cutting swirl and spray watchful and firm advancing,
(That in the distance! is that a wreck? is the red signal flaring?)*

*Slush and sand of the beach tireless till daylight wending,
Steadily, slowly, through hoarse roar never remitting,
Along the midnight edge by those milk-white combs careering,
A group of dim, weird forms, struggling, the night confronting,
That savage trinity warily watching., struggling, the night confronting,
That savage trinity warily watching.*

Patrolling Barnegat, W. Whit.

Բանաստեղծության կառուցվածքը հետևյալն է. այն ամերիկյան կամ այլ կերպ ասած նորակերպ սոնետ է (Innovative Sonnet), որն ի տարբերություն ավանդականի՝ ունի ավելի ազատ կառուցվածք: Տողերի բաժանումը ոչ թե ենթադրում է հավասար ռիթմական միավորներ ստեղծելուն, այլ ծառայում է համեմատաբար ինքնուրույն իմաստային հատվածների առանձնացմանը: Ինքը՝ մեծն Ուիթմենը, այնուամենայնիվ, բարեհնչունություն ստեղծելու, բանաստեղծությանը երաժշտա-

³ Հարությունյան Ա. Ընտրանի անգլիական և ամերիկյան պոեզիայի, Երևան, Ապոլոն, 2000:

⁴ Hartman C. Free Verse: An Essay on Prosody. Princeton, Princeton University Press, 1980.

կանություն և շարժունակություն հաղորդելու համար դիմել է *ing* բայական վերջավորությանը (*running, muttering, breasting, advancing, flaring, wending, remitting*):

Բանաստեղծության մեջ նկարագրվում է բնության մի հետաքրքիր տեսարան՝ ծովն իր ողջ մոլեգնությամբ: Հեղինակն այս երևույթն օժտել է հուզարտահայտչական տարբեր նրբերանգների համադրմամբ, որոնք կարելի է զգալ միայն մտքի լարումով ու խորաթափանցությամբ: Ստեղծագործությունը սկսվում *“wild”* բառի կրկնությամբ, որն իմաստակիր արժեք ունեցող միավոր է. այն ընթերցողին հաղորդում է բանաստեղծության ողջ տրամադրությունը: Առանձնակի ուշադրության է արժանի երկրորդ տողում առկա *“the roar of the gale, with incessant undertone muttering”*, փոխաբերական արտահայտությունը, որտեղ հեղինակը *անձնավորման* միջոցով նկարագրում է քամու սուլոցը: Նա անընդմեջ լսում է «քամու *մռնչունը*, որն անդադար կիսածայն *մռթմռթում* է»: Սակայն քամին չի հանդարտվում, և այդ *«կիսածայն մռթմռթոցը»* *“undertone muttering”* վերածվում է *«սատանայական քրքիջի»* *“demoniac laughter”*, իսկ մոլեգնած ծովի *«կաթնասպիտակ ալիքներն»* էլ *“milk-white combs”*, որոնք կարծես թե *«սրադաշակում են»*, շարունակում են այլեկոծել ծովը: Բանաստեղծը մակդիրների միջոցով մեծագույն վարպետությամբ է նկարագրում բնության այս հիանալի տեսարանը: Փոխաբերական արտահայտությունների շարքում առանձնակի ուշադրության է արժանի *“savegest trinity”* *«վայրի միություն»* արտահայտությունը, որն իր պատկերավորության ինքնատիպ լիցքով առանձնանում է մյուսներից և պարբերաբար կրկնվելով բանաստեղծության մեջ՝ նորանոր իմաստային նրբերանգներ է հաղորդում ողջ հատվածին:

Ալիքները, օդը և կեսգիշերը “Waves, air, midnight” վերածվել են *«վայրի միության»* և դարձել բնության այս հրաշալի տեսարանի ականատեսը: Առանձնակի ուշադրության է արժանի *“trinity”* միավորի ստուգաբանական վերլուծությունը: Այն կրոնական բառ է և ընկալվում է որպես Աստծո, Որդու և Սուրբ երրորդության միություն:⁵

Այս ինքնատիպ կապակցության մեջ զուգորդված բառերը թենթվում են մեկը մյուսին անհամադրելի, այնուամենայնիվ, ստեղծա-

⁵ The Trinity is the union of Father, Son and Holy Spirit as one God (Oxford Advanced Learner's Dictionary, Oxford, Oxford University Press, 2000); Webster's Collegiate Dictionary. USA. Mass. Merriam Co. Publishers, 1947.

գործության մեջ միաձուլվելով՝ դարձել են բնության երևույթները միավորող ամբողջություն:

Ինչ խոսք, բանաստեղծությունը հեղեղված է ինքնատիպ արտահայտչամիջոցների գործածությամբ, սակայն տեքստի գեղագիտական մթնոլորտի ձևավորմանը նպաստել են հատկապես կրկնության ինքնատիպ դրսևորումների՝ *բաղաձայնությի (Alliteration) [s,t,]* *առձայնությի (Assonance) [u,a,oa]* և *կոնսոնանսի (Consonance) [r]* նուրբ համադրությունները, որոնց շնորհիվ ստեղծվում են ալեկոծվող ծովի, քամու, ձյան աներևակայելի ելևէջներ:

*Slush and sand of the beach tireless till daylight wending,
Steadily, slowly, through hoarse roar never remitting,*

Կրկնության այս ինքնատիպ դրսևորումները առանձնանում են ընդհանուր հնչողության ֆոնի վրա, որտեղ ձյան , քամու, ծովի աննկարագրելի պատկերները առարկայանում են շնորհիվ տեմբրի յուրատիպ երանգավորմամբ: Տվյալ հատվածի առաջին տողն առանձնանում ձայնի ուժգնությամբ և շնչեղությամբ *Slush and sand* բառերն արտաբերելիս: Երկրորդ տողը սկսվում է ձայնի նույն ուժգնությամբ և հետզհետե նվազում, իսկ դադարներն արտահայտվում են շարահյուսական հնչերանգի շրջանակներում: Ամերիկյան մյուս ակնառու ներկայացուցիչը՝ Էմիլի Դիկինսոնը, նույնպես դիմել է բազում կրկնության դրսևորումների՝ իր խոսքը դարձնելով «բարձրաձաշակ» և անկրկնելի, որի շնորհիվ էլ արժանանում է բազում ընթերցողների ակնածանքին:

*It sifts from Leaden Sieves-
It powders all the Wood
It fills with Alabaster Wool
The Wrinkles of the Road-*

*It makes an Even Face
Of Mountain, and of Plain-
Unbroken Forehead from the East
Unto the East again-*

*It reaches to the Fence-
It wraps it Rail by Rail
Till it is lost in Fleeces-
It deals Celestial Vail*

*To Stump, and Stack-and Stem-
A Summer's empty Room-
Acres of Joints, where Harvests were,
Recordless, but for them-*

*It Ruffles Wrists of Posts
As Ankles of a Queen-
Then stills its Artisans-like Ghosts-
Denying they have been*

It sifts from Leaden Sieves, E. Dick.

Բանաստեղծության կառուցվածքը պարզ է՝ բաղկացած քառատող (quatrain) տներից: Իրեն բնորոշ կանացի նրբագեղությամբ Դիկինսոնը դիմել է հանգերի ուրույն դրսևորումների:

Ինչպես տեսնում ենք երկրորդ քառյակում հանգավորված են երկրորդ և չորրորդ տողերը՝ *“Plain- again”*, երրորդ տան մեջ՝ *“Rail - vaii”*, հաջորդում՝ *“stem – them”*, իսկ վերջին տան մեջ ունենք խաչաձև հանգավորում՝ *“posts- ghosts”* և *“queen – been”*: Դիկինսոնը հանգերի հետաքրքիր համակցմամբ համահունչ մի կամուրջ է ստեղծում տողերի միջև՝ հատվածն ապահովելով շփմական ելևէջումներով:

Բանաստեղծությունն առաջին հայացքից թվում է բավականին պարզ, բայց միևնույն ժամանակ դժվարըմբռնելի:

Այն իրավամբ կարելի է համարել ընդարձակ փոխաբերության լավագույն ցանկ: Իրերն ու երևույթները ներկայացված են անուղղակի կերպով: Բազմաթիվ հնարների, բառային տարբեր համադրությունների միջոցով հեղինակը նկարագրում է մի պարզ երևույթ՝ ձյան տեղալը:

Ջարմանալին այն է, որ Դիկինսոնը ուղղակիորեն չի հիշատակում *ցուրտ, ծմեռ, ձյուն, տեղալ* բառերը, այլ փոխաբերական արտահայտությունների միջոցով ընթերցողին է փոխանցում բանաստեղծության ողջ միտքը: Բնությունը նկարագրող երևույթները *“Leaden Sieves”* (այստեղ հեղինակը նկատի ունի մոխրագույն ամպերը), *“Alabaster Wool”* (այստեղ հեղինակը նկատի ունի ձերմակ ձյունը), փոխաբերական բառակապակցությունները, որոնցում ակնհայտորեն խախտված է բառերի տրամաբանական կապը, իմաստային մակարդակում, ըստ էության, անհեթեթություն են ներկայացնում: Վերնշանային մակարդակում է հասկանալի դառնում բառակապակցությունները կազմող բաղադ-

րիչների հարաբերակցությունը, իսկ վերջիններիս դիտարկումը հեղինակի մտահղացումների պրիզմայով հանգեցնում է փոխաբերության լեզվաբանաստեղծական դերի բացահայտմանը: Դիկինսոնը գերծ չի մնում նաև հնչյունային զարդարանքներից, որոնք է՛լ ավելի են «շոյում» խոսքը, ավելին՝ հանդիսանում են ստեղծագործության իմաստակիր արժեք ներկայացնող միավորները:

To Stump, and Stack- and Stem- բաղաձայնույթի առկայությունն ակներև է, որն արտահայտվել է [s] հնչյունով, որը պատահական չէ: Այն հենց ծյան բառի առաջին հնչյունն է, որն ընթերցողին կարծես թե հուշում է, թե ինչի մասին է խոսքը “*it snows*”: Արտաքին հնչյունական հանգը համապատասխանում է բովանդակությանը՝ նկարագրելով ծյան տեղումը, և ստեղծագործության ներքին կողմը զգայական ցայտուն արտահայտություն է ստանում: Դիկինսոնը իրեն հատուկ մեծ վարպետությամբ ստեղծում է մի ուրույն հնչյունախաղ, որը համապատասխանում է բանաստեղծի արտահայտած մտքին: Առձայնույթի (*sifts, sieves, fills, wrinkles, stills, artisans*), կոնսոնանսի (*alabaster wool, wrinkles, wrists, posts, ghosts*) բաղաձայնույթի (*stump, stack, stem*) նուրբ համադրությամբ հեղինակին հաջողվում է վերարտադրել բնության երևույթներից մեկի՝ ծյան պատկերը: Տեքստի գեղարվեստական ընթերցանությունը բացահայտում է *To Stump, and Stack-and Stem-* բանաստեղծական տողի հնչերանգային ուրույն բնութագիրը: Յուրաքանչյուր բառից հետո նկատվում է տեմպի դանդաղեցում, որին նկատելիորեն օգնում է [s] հնչյունի ինտենսիվ արտասանությունը, ծայնը ձեռք է բերում շնչեղության երանգ, որն է՛լ ավելի է ուժեղացնում պատկերի լեզվաբանաստեղծական ներգործուն ուժը, յուրաքանչյուր բառ արտասանվում է տրամաբանական շեշտով: Հնչերանգային նրշված գծերը ավելի կենդանի ու շոշափելի են դարձնում հեղինակի խոսքը և նպաստում նյութի ընկալմանը, հասկացմանն ու արժևորմանը: Դիկինսոնի պոեզիան ոչ թե պատմում է, այլ հետաքրքիր բառային համադրությունների միջոցով ստեղծում է տվյալ երևույթի պատկերը: Բանաստեղծությունը վերածվել է մի «հանելուկի», որը փոքր հուշումներով ընթերցողին թույլ է տալիս յուրովի ըմբռնել ստեղծագործության իմաստը: Բանաստեղծության գեղագիտական ընկալմանը նպաստել են նաև համեմատությունները *It Ruffles Wrists of Posts As Ankles of a Queen-; Then stills its Artisans-like Ghosts-Denying they have been*, որոնք հեղինակի խոսքը դարձնում են է՛լ ավելի խորհրդավոր:

Ինչպես նշեցինք, կրկնությունը ամերիկյան ակնառու բանաստեղծների ստեղծագործություններում ունի ոչ միայն լեզվական, այլև

արտալեզվական գործառույթ: Այն «զենք» է դարձել իրենց հայացքները, քաղաքական դիրքորոշումները արտահայտելու համար: Այսպես, օրինակ, Ուիթմենի բանաստեղծություններում բազմիցս հանդիպում ենք ենթակա հարակրկնություն դրսևորումը, որը տեղիք է տալիս մտածելու նրա հայացքների, մտածելակերպի շուրջ: Ուղղաձիգ համատեքստից պարզ է դառնում, որ *I, you, we* դերանունների հաճախակի կրկնությունը պայմանավորված է նրա քաղաքական դիրքորոշումներով: Ստորև բերենք մի օրինակ և փորձենք պարզաբանել վերը ասվածը:

*I celebrate myself, and I sing myself,
And what I assume You shall assume,
For every atom belonging to me as good belongs to you
I loaf and I invite my soul,
I lean and loaf at my ease observing a spear of summer grass...*

Song of Myself, W. Whit.

Այս հատվածում ենթակա հարակրկնությունն արտահայտվել է *“I”* դերանունով: Հեղինակը փորձում է յուրաքանչյուր տողում ցույց տալ իր ներկայությունը ժողովրդի կողքին: Նա կապ է ստեղծում իր և ժողովրդի միջև և դառնում է նրանց խոհերի, վշտերի կրողը: Առանձնակի ուշադրության է արժանի *For every atom belonging to me as good belongs to you* բանաստեղծական տողը, որտեղ հեղինակը հայտնում է այն միտքը, որ այն ամենը, ինչ իրենն է, նաև ժողովրդինն է: Նա բացահայտորեն չի արտահայտում իր քաղաքական մտքերը. դրանք սքողված են բանաստեղծական կառույցների, կրկնությունների մեջ: Ղարաշրջանում տիրող ստրկատիրական մթնոլորտը, ռասսայական անհավասարությունը փոթորկել էին հեղինակի կյանքը: Նա պայքարում է վերացնել այդ «անջրպետը» և քարոզում է մի միտք, որ այս կյանքում «իմ ու քո» չկա, և բոլորս իրավահավասար ենք: Ենթակա հարակրկնությունը, որն արտահայտվել է *“I”* բառային կրկնությամբ, պատահական չէ: Այդ «ես»-ը ոչ միայն հեղինակն է, այլ հենց ինքը՝ համայն աշխարհի մարդկությունը: Նա մարդկանց նույնացնում է իր «ես»-ի հետ՝ դառնալով միասնականության հորդորողը: Ինչպես վերը նշեցինք, ամերիկյան այս ակնառու բանաստեղծների խոսքում ոչ միայն լեզվական հնարները, այլև կետադրությունը, քերականական զանազան դրսևորումները ոճական երանգներ են հաղորդում իրենց խոսքին: Այսպես.

*Singing my days,
Singing the great achievements of the present,
Singing the strong light works of engineers,
Our modern wonders, (the antique ponderous Seven
outvied,)
In the Old World the east the Suez canal,
The New by its mighty railroad spann'd,
The seas inlaid with eloquent gentle wires;
Yet first to sound, and ever sound, the cry with thee O soul,
The Past! the Past! the Past!*

A Passage to India, W. Whit.

Ուիթմենի “A Passage to India” ստեղծագործությունը գրվեց հենց այն ժամանակ, երբ բացվեց Սուեզի ջրանցքը, որը Ուիթմենը խորհրդրդանշական համարեց: Նրա կարծիքով այն ոչ միայն տարածքներ պետք է միավորեր, այլև համայն աշխարհի ժողովուրդներին: Չեղեցիկ բառային զուգորդումներով է սկսում մեծ բանաստեղծը այս հիանալի ստեղծագործությունը: Առաջին երեք տողերի հարակրկնությունը՝ արտահայտված *singing* բայական ձևի կրկնությամբ հատվածն ապահովում է բարեհնչունությամբ և ռիթմիկությամբ: Հեղինակը մեծ ցնծություն է ապրում, քանզի նա հիացած է ներկայի մեծ ձեռքբերումներով: Պարբերությունն ավարտվում է կրկնության հիանալի դրսևորմամբ՝ *երկրորդամբ The Past! the Past! the Past!*, որն առանձնակի շեշտ է հաղորդում հեղինակի խոսքին: Նա կոչ է անում բոլոր ազգի ներկայացուցիչներին ռասայական խտրականություն չդնել մեկը մյուսի միջև, լինել հավասար, սիրել և հարգել մեկմեկու:

*...A worship new I sing,
You captains, voyagers, explorers, yours,
You engineers, you architects, machinists, yours,
You, not for trade or transportation only,
But in God's name, and for thy sake O soul...*

Հատվածն աչքի է ընկնում *you & yours* դերանվանական կրկնություններով՝ արտահայտված տողի սկզբում և վերջում: Սույն օրինակում աչքի է ընկնում տողասկզբում հարակրկնություն, իսկ տողավերջում՝ վերջույթ կրկնության դրսևորումները: *You captains, voyagers, explorers, yours, You engineers, you architects, machinists, yours*: Ահա այս երկու արտահայտչամիջոցների համատեղումը ապահովում է խոս-

քի հուզարտահայտչականության դրսևորմանը և ռիթմի ձևավորմանը: Կրկնության արվեստի մեծ գիտակ Ուիթնենին հաջողվում է իր խոսքը դարձնել պատկերավոր, որտեղ հեղինակի գաղափարները դառնում են տեսանելի և շոշափելի:

Ստեղծագործությունն ընթերցելիս հիացմունք ես ապրում և զարմանում, որ անգամ քերականական կարգերը ոճական երանգներ են ձեռք բերել: Ամբողջ գլուխգործոցում տեղ գտած գրեթե բոլոր գոյականները գրված են հոգնակի թվով: Այստեղ հոգնակի թվի կազմությունն անգամ դառնում է խորհրդանիշ ժողովրդին համախմբված և միասին տեսնելու մեջ *waters, animals, mountains, trees, engineers, architects, machinists, captains, voyagers, explorers, days, wires..* . :

Բանաստեղծության մեջ աչքի է ընկնում նաև բառային ինքնատիպ կրկնությունը ***նմանավերջությունը*** (Homoeoteleuton):

*Swiftly I shrivel at the thought of God,
At Nature and its wonders, Time and Space and Death,
But that I, turning, call to thee O soul, thou actual Me,
And lo, thou gently masterest,
Thou matest Time, smilest content at Death,
And fillest, swellest full the vastnesses of Space. ...*

Հատվածն աչքի է ընկնում “*est*” ածականի գերադրական աստիճանի վերջավորության կրկնությամբ, որն առաջ է բերել ***նմանավերջություն*** երևույթը: Այստեղ բառերը, ստանալով միանման վերջավորություն, դարձել են արծազանք մեկը մյուսի համար՝ համատեքստին հաղորդելով առանձնակի ուժգնություն: Բառերը, մեկը մյուսին «կամրջվելով», սաստկացրել են հատվածի հուզական ֆոնը՝ խորը հիացմունք պատճառելով ընթերցողին:

Եվ այսպես, վերլուծության ենթարկելով կրկնության բազմապիսի դրսևորումները ամերիկյան ակնառու հեղինակների խոսքում, կարող ենք եզրակացնել, որ նրանց շարադրանքը, բանաստեղծական կառույցները, կրկնությունների կիրառման ձևը մեզ հիշեցնում են Աստվածաշունչը: Նրանք վերածվել են «մարգարեների», որոնք մարդկությանը քարոզում են հավասարություն, եղբայրություն, սեր, իսկ կրկնության բազում դրսևորումները ոչ միայն հնչեղություն, ներդաշնակություն են հաղորդում, ավելին՝ դրանք դարձել են բարոյախոսության, իմաստության, բարոյական արժեքների արտահայտման միջոցներ:

Երրորդ գլուխը վերնագրված է «*Կրկնության թարգմանական համարժեքության խնդիրը Ու. Ուիթմենի, Է. Դիկինսոնի, Ռ. Ֆրոսթի ստեղծագործություններում*»: Այս գլխում թարգմանական տարբերակների հիման վրա փորձ է արվում կատարել բանաստեղծությունների բնագրային և թարգմանական տեքստերի զուգադրական վերլուծություն, որը հնարավորություն է տալիս վեր հանել բնագրի և թարգմանության միջև գոյություն ունեցող անհամապատասխանությունները և պարզաբանել, թե որքանով են դրանք խաթարում բովանդակության ըմբռնումը: Առանձնակի ուշադրության են արժանանում այն անհամարժեք տարրերը, որոնց վերհանումն ու քննությունը կբարելավեն չափածո խոսքարվեստի թարգմանության թե՛ գործնական և թե՛ տեսական դրույթների իմաստավորումն ու կիրառությունը:

Թարգմանական գործունեությունը միշտ եղել է գիտական հետազոտությունների և քննարկումների առարկա:⁶

Գաղտնիք չէ, որ ժամանակակից լեզվաբանության մեջ լեզուների զուգադրական ուսումնասիրությունը շատ է կարևորվում, որն առավել համակողմանի պատկերացում է տալիս տվյալ լեզվի մասին: Ինչպես գիտենք, զուգադրական վերլուծությունը տարվում է լեզվական բոլոր ուղղություններով, սակայն ոճական երևույթների զուգադրությունը, կարելի է ասել, ուսումնասիրության չափազանց արդյունավետ և հետաքրքիր բնագավառ է: Հարկ է նշել, որ զուգադրական մեթոդով գեղարվեստական երկի և նրա թարգմանական տարբերակների քննությունը խթանում է ստեղծագործության հուզարտահայտչական երանգավորումների բացահայտմանը, ինչպես նաև ոճական առանձնահատկությունների վերհանմանը:

Զուգադրական վերլուծության շնորհիվ կարելի է ներթափանցել բնագրի գաղտնիքների մեջ և վեր հանելով նրանում առկա տարբերություններն ու նմանությունները՝ լիովին տիրապետել այս կամ այն լեզվին: Թարգմանիչը պետք է «գինված» լինի ոչ միայն տվյալ լեզուների խորքային իմացությամբ, այլև քաջ ծանոթ լինի համադրվող լեզուների մշակույթին, ժողովրդի պատմությանը, քանզի դա մի գործընթաց է, երբ հարաբերվում են երկու տարբեր մշակույթներ: Թարգմանչի գործը բա-

⁶ Бархударов Л.С. Язык и перевод (Вопросы общей и частной теории перевода). М., Наука, 1975 // Виноградов В.С. Теория перевода (Общие и лексические вопросы). М., Высшая школа, 2006 // Nida E., Taber Ch. The Theory and Practice of Translation. Netherlands, Leiden, 1969 // Catford J. A Linguistic Theory of Translation (An Essay in Applied Linguistics). London, OUP, 1965.

վականին դժվարանում է հատկապես գեղարվեստական ստեղծագործություն թարգմանելիս, որն իրենից ստեղծագործական մեծ աշխատանք է ներկայացնում: Այստեղ շատ է կարևորվում լեզվարտահայտչական միավորների պահպանումը, քանզի դրանք հեղինակի անհատական ոճի բաղկացուցիչ մասն են կազմում:

Ստորև բերենք մի ուրույն բանաստեղծության օրինակ Դիկինսոնի ստեղծագործություններից:

*"Hope" is the thing with feathers–
That perches in the soul–
And sings the tune without the words–
And never stops—at all–*

And sweetest—in the Gale—is heard–

*And sore must be the storm –
That could abash the little Bird
That kept so many warm–*

*I've heard it in the chilliest land –
And on the strangest Sea–
Yet, never, in Extremity,
It asked a crumb—of Me.*

Hope is the thing with feathers, E. Dick.

Բանաստեղծությունն աչքի է ընկնում թե՛ իր ինքնատիպ կառուցվածքով և թե՛ բովանդակությամբ: Ստեղծագործության կառուցվածքը շատ հստակ է: Այն յամբական է, որտեղ տները հանգավորված են համապատասխանաբար abcd սխեմայով, իսկ երկրորդ և երրորդ տները՝ abab, abbb: Բանաստեղծությունը հատկապես աչքի է ընկնում իր խորը փիլիսոփայական մտքերով: Դիկինսոնը մարդկությանը փորձում է ցույց տալ, թե որքան կարևոր է Աստծո պարգևներից մեկի՝ հույսի արկայությունը մեր հոգիներում, արանց որի անհնար է ապրել և ստեղծագործել: Հույս բառը նա անձնավորել է և վերածել մի թռչնակի, որը «հանգրվանել է» մեր հոգում և անվերջ «դայլալույում» է: Եվ հետևաբար հեղինակը այդ հասկացությունը ներկայացրել է այնպիսի հատկանիշներով, որոնք բնորոշ են թռչունին perch- թառել, sing-երգել, heard-լսել:

Ուշադրության են արժանի նաև բանաստեղծության մեջ տեղ գտած մեծատառերով գրված բառերը *Gale, Bird, Extremity, Me* որոնք իմաստային լուրջ արժեք են իրենցից ներկայացնում և հանդես են գալիս որպես ստեղծագործության բովանդակության կրողներ: Դիկինսոնի ոճին ներհատուկ է առնչանակային իմաստ արտահայտող բառերը մեծատառով գրելը, որով նա փորձում է ընթերցողի ուշադրությունը սևեռել ելակետային բառերի վրա: Միայն վերիմաստային մակարդակում է, որ այս բառերի վերլուծությամբ կարելի է հասկանալ հեղինակի միտումը, որտեղ *sings the tune without the words* նախադասության միջոցով հեղինակը նկատի ունի, որ հույսը միշտ ապրում է մեր հոգիներում, իսկ *And never stops-at all* - երբեք մեզ չի լքում: Բազմաշաղկապությունն էլ իր հերթին ոճական լիցք է հաղորդում հատվածին և մի տեսակ դանդաղեցնում է խոսքը՝ այն դարձնելով հանդիսավոր և վսեմ: Իսկ *Gale, storm, chilliest land* բառերը ստեղծագործության մեջ փոխաբերական իմաստ են արտահայտում և ընկալվում որպես կյանքի այն դժվար պահերը, որ մարդը հանդիպում է իր կյանքում: Առանձնակի նշանակություն ունի նաև կետադրական նշանների առկայությունը: Բանաստեղծությունը հեղեղված է գիծ կետադրական նշաններով, որոնք, զուգակցվելով առնչանակային իմաստ արտահայտող բառերի հետ, էլ ավելի են սաստկացնում հեղինակի արտահայտած միտքը, ինչպես նաև նպաստում տեմպի դանդաղեցմանը՝ ընթերցողի ուշադրությունը սևեռելով կարևորագույն հատվածների վրա *And never stops-at all -; And sweetest- in the Gale- is heard-*

Ստորև բերենք հայերեն համարժեք թարգմանությունը, որն առաջադրվել է Սամվել Մկրտչյանի կողմից.

*Հույսը երգող մի թռչուն է,
Թափառում է նա հոգում
Ու զեղզեղում առանց բառի,
Երբեք նա չի հոգնում*

*Անուշ է երգը սյուքի հետ
Մրրիկն է անգութ այնպես
Որ սառեցնում է թռչնակին
Որ տաքացնում էր մեզ:*

*Լսել են երգը ցուրտ երկրում,
Եվ ծովերում անտակ*

*Քայքայ նա երբեք վհատվելիս
Ինձնից չուզեց փշրանք:*

Թարգմանությունը՝ Սամվել Մկրտչյանի

Թարգմանությունն ընդհանուր առմամբ հաջողված է, թեև կան հատվածներ, որտեղ հուզարտահայտչական երանգավորումը նվազել է որոշ բառերի անհամարժեք թարգմանության, ինչպես նաև բանաստեղծության մեջ տեղ գտած լեզվական արտահայտչամիջոցների բացակայության հետևանքով: Առաջին բանաստեղծական տան բազմաշաղկապությունը բացակայում է թարգմանության մեջ, որտեղ խոսքը կորցրել է իր հանդիսավորությունը: Ընթերցողի ուշադրությունն ենք հրավիրում նաև *perch* – հայերենում համարժեք *թափառել* բառի թարգմանությանը, որը մեր ընկալմամբ համարժեք չէ, քանի որ *հույս* խորհրդանշող *թռչունը* չի կարող «թափառել»: Այս միավորի համարժեք թարգմանությունը կարող է լինել «բույն դնել» կամ «հանգրվանել» արտահայտությունները, որոնք ավելի բանաստեղծական են և լիովին համապատասխանում են թռչուն բառի հետ համադրվելիս: Իսկ ինչ վերաբերում է առաջին բանաստեղծական տան մեջ արտահայտված հանգին, այն քիչ թե շատ պահպանվել է *soul-all հոգում- հոգում*: Մյուս բանաստեղծական տներում լիովին բացակայում է հանգը, որտեղ ստեղծագործությունը կորցրել է իր բարեհնչունությունը: Թարգմանչի համար շատ կարևոր է ներթափանցել հեղինակի ներաշխարհը, բացահայտել այն տարրերը, որոնք համարվում են հեղինակի ոճի բաղկացուցիչ մասը: Ինչպես նշեցինք, Դիկինսոնի ոճին հարիր է անկանոն կետադրությունը և ելակետային բառերը մեծատառով գրելը: Հավանաբար ճիշտ կլիներ պահպանել դրանք թարգմանության մեջ, որոնք, ինչ խոսք, ոճական նկատառումներով է հեղինակի կողմից ներկայացվել: Ուշադրության է արժանի նաև *Gale* միավորի թարգմանությունը, որը հայերենում թարգմանվել է համարժեք *սյուք* միավորով: Հարկ է նշել, որ «սյուք» բառը ընթերցողի մոտ դրական ելևէջումներ է առաջացնում և հետևաբար չի ըմբռնվում որպես *կյանքի դժվարագույն օրեր*: Մենք գտնում ենք, որ թեպետ բառարաններում, այո՛, այն թարգմանվում է նաև սյուք միավորով, այնուամենայնիվ, համատեքստային վերլուծությունից ելնելով՝ առաջարկում ենք «մրրիկ» բառը, որը լիովին համահունչ է բանաստեղծության թեմատիկային:

Եվ այսպես, գեղարվեստական ստեղծագործության՝ հատկապես չափածո խոսքի համարժեք թարգմանությունը բարդ գործընթաց է, որը

պայմանավորված է նրանում առկա բարդ տաղաչափական համակարգերի, լեզվարտահայտչական միջոցների, ոճի բազմաբնույթ էությանը, քանի որ թարգմանիչը համադրում է տարբեր մշակույթներ, տարբեր լեզվամտածողություններ:

Ուիթմենի, Դիկինսոնի, Ֆրոսթի բանաստեղծություններում գործածված արտահայտչամիջոցները, հատկապես կրկնությունը, ունեն առնչանակային իմաստ, քանզի դրանք ստեղծագործությունն օժտում են ոչ միայն հնչեղությամբ, իրենց երաժշտականությամբ, այլև հանդիսանում են տեքստի իմաստաբովանդակային կրողները, հետևաբար թարգմանիչը պետք է «գործի դնի» այն բոլոր հնարավոր միջոցներն ու մեթոդները, որպեսզի կարողանա որքան հնարավոր է բնագրին մոտ վերարտադրել հեղինակի խոսքը:

Եզրակացության մեջ ի մի են բերվում ուսումնասիրության արդյունքներն ու կատարվում են ընդհանրացումներ:

Այսպիսով, լեզվաոճական, լեզվաբանաստեղծական մեթոդների համադրմամբ խորքային վերլուծության ենթարկելով կրկնությունը, կարող ենք եզրակացնել հետևյալը.

1. կրկնությունը խոսքում ունի առանցքային դերակատարություն. այն հեղինակի անհատական ոճի բաղկացուցիչ տարր է, որն արտահայտում է նրա աշխարհընկալումը, ներաշխարհը, ավելին՝ հանդիսանում ստեղծագործության իմաստաբովանդակային միավորը:
2. հնչյունային մակարդակում տեղ գտած կրկնությունները
 - հիմնականում ռիթմի դրսևորման միջոց են,
 - արտահայտում են գեղագիտական արժեք,
 - նպաստում են տեքստի մեղեդայնությանը,
 - հանդիսանում են ստեղծագործության իմաստային արժեք ներկայացնող միավորներ,
 - հեղինակի կողմից երբեմն չարաշահվելով՝ կորցնում են իրենց հիմնական գործառնությունը և դիտվում որպես «չգիտակցված կրկնություններ»,
 - հնչյունախաղերի միջոցով ստեղծում են այս կամ այն երևույթի պատկերը՝ ընթերցողին թույլ տալով յուրովի ընկալել բանաստեղծության էությունը,
3. բառային կրկնությունները նշված հեղինակների ստեղծագործություններում նույնպես ունեն առանցքային դերակատարություն, որոնք նպաստում են տեքստի գեղագիտական մթնոլորտի ձևավորմանը՝ արտահայտելով բազում մարդկային տրա-

մադրություններ (ազատատենչ, բարոյախրատական, մարդափրական գաղափարներ),

4. շարահյուսական մակարդակում առանձնակի դերակատարություն ունեն այն կրկնությունները, որոնց խիստ հաճախակի գործածությունը պայմանավորված է տվյալ դարաշրջանի սոցիալ-քաղաքական դիրքորոշումներով,
5. դիտարկված բանաստեղծություններում կետադրությունը առանցքային նշանակություն ունի: Թեև այն ընդհանուր առմամբ խոսքում իրականացնում է շարահյուսական գործառույթ, գեղարվեստական գրականության շրջանակներում (տվյալ դեպքում ամերիկյան բանաստեղծական խոսքում) այն ձեռք է բերել մեկ այլ՝ ոճական գործառույթ: Կետադրական որոշ նշանների հաճախակի կրկնությունը տեքստին հաղորդում է ռիթմային նորանոր նրբերանգներ,
6. զուգադրական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ չափածո խոսքի համարժեք թարգմանությունը բարդ գործընթաց է, որը պայմանավորված է նրա բարդ տաղաչափական կառույցներով (ազատ ոտանավոր, ավանդական նորմերով գրված բանաստեղծություններ), բազում հանգային դրսևորումներով (կից, խաչաձև, համատարած), նրանում առկա լեզվարտահայտչական հնարներով: Չափածո խոսքի համարժեք թարգմանությունը ենթադրում է զուգադրվող լեզուների մշակույթների, պատմամշակութային ավանդույթների, լեզվական խորքային գիտելիքների իմացություն,
- ա) թարգմանչի համար հույժ կարևոր է պահպանել հեղինակի ոճը և առանձնակի ուշադրության արժանացնել այն լեզվական միավորների առկայությունը, որոնք հեղինակի խոսքարվեստում առանցքային նշանակություն են ձեռք բերում, ավելին՝ հանդիսանում են ստեղծագործության իմաստի կրողները, քանի որ հենց այդ հնարների առկայությունն է, որ թույլ է տալիս ընթերցողին լիովին ընկալել հեղինակի միտումը և արժևորել նրա գեղարվեստական խոսքը,
- բ) նույնիսկ մեկ բառի անհամարժեք թարգմանությունը կարող է հանգեցնել հեղինակի արտահայտած մտքերի աղավաղման, որի արդյունքում տվյալ բանաստեղծությունը կորցնում է իր արժեքը և դառնում միապաղաղ:

Հարկ է ավելացնել նաև հետևյալը, որ կրկնությունը, իրացվելով բանաստեղծության մեջ, դառնում է մարդկության գեղարվեստական

ընկալման անբաժանելի մաս: Այն աչքի է ընկնում իր պատկերավորությամբ, մարդկանց հոգեկան աշխարհի վրա ներգործելու ուժով ու անկրկնելիությամբ, որի շնորհիվ էլ գեղարվեստական խոսքը ձեռք է բերում իրական արժեք, և որն էլ արժանանում է հասարակության մեծ ակնածանքին:

Հետազոտության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Repetition in Whitman's "A Passage To India" // Armenian Folia Anglistika, International Journal of English Studies, Yerevan, Lusakn հրատ., 2010, էջ 83-88 (co-author A. Matevosyan).
2. Հարակրկնությունը Ուիթմենի պոեզիայում // Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում, Երևան, «Ձանգակ-97» հրատ., 2011, էջ 8-12 (համահեղինակ Ա. Մաթևոսյան):
3. Կրկնության թարգմանական համարժեքության խնդիրը ամերիկյան պոեզիայում // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, N14, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 120-129:
4. Կրկնության լեզվաբանաստեղծական արժեքը Ու. Ուիթմենի, Ռ. Ֆրոսթի ստեղծագործություններում // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, N14, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ130-135:

Анна Ашотовна Мелконян

Лингвопоэтика повтора в художественной речи

(на материале американского стихотворного текста)

Диссертация на соискание ученой степени
кандидата филологических наук
по специальности 10.02.07 “Германские языки”

РЕЗЮМЕ

Реферируемая посвящена исследованию одной из наиболее актуальных проблем в области филологии – проблеме изучения повтора в художественном тексте. Для поэтического языка повтор является одним из наиболее характерных приёмов. Повтор универсален по своей природе, он обладает достаточной экспрессивностью и эмоциональностью, используется для воспроизведения оценки изображаемых автором явлений действительности и одновременно способствует усилению выразительности и образительности речи, воздействуя на эмоционально-волевую сферу человека.

Для достижения указанной цели в процессе диссертационного исследования были поставлены и решены следующие **задачи**:

- исследовать повторы в стихотворном тексте, выделить типы, характерные для индивидуального стиля автора;
- определить функцию повтора в стихотворных текстах изучаемых поэтов;
- рассмотреть разновидности повтора с точки зрения разноразличных средств его выражения в поэзии;
- выявить лингвопоэтические особенности повтора в художественном тексте;
- путем сопоставительного анализа выявить существенные и типичные различия между языком оригинала и армянскими переводами, что в свою очередь даст возможность выделить лингвостилистические и лингвопоэтические особенности языка оригинала.

Актуальность темы данной диссертации обусловлена несколькими факторами. В современной лингвистике повтор справедливо считается многоаспектным, сложным и разнофункциональным явлением. Несмотря на имеющуюся в этой области обширную литературу, вопрос о рассмотрении повтора как стилистической категории, которая играет значительную роль в лингвопоэтической организации текста, все еще остается недостаточно изученным, так же создание единой классификации повтора, выявление его функциональных особенностей в американской поэзии - всё это, несомненно, актуально.

Научная новизна работы заключается в том, что в ней впервые рассмотрены разновидности языкового повтора с точки зрения разноуровневых средств его выражения в поэзии таких знаменитых писателей, как У.Уитмен, Э.Дикинсон и Р.Фрост. Повторы в их произведениях имеют коннотативные значения, так как они придают тексту не только звучность и мелодичность, но и являются смыслообразующими единицами.

Теоретическая значимость работы заключается в том, что данное исследование способствует дальнейшему развитию теории восприятия и интерпретации художественного текста.

Практическая значимость работы определяется возможностью использования ее результатов в спецкурсах по стилистике и переводу.

Структура работы

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы.

Anna Melkonyan

The Linguopoetic Value of Repetition in Verbal Art (with special reference to pieces of American poetry)

The subject matter of the research is the study of **repetition** in poetry and its equivalent translation into Armenian. Repetition is one of the expressive means which enriches the expressiveness of the utterance giving additional emotional colorings to the author's speech. Repetition structures our attention to what we read. The recurrence of images, words, parallel structures, concepts creates a rhythm which underlies reassuring moments of recognition. By means of various syntactic and formal elements repetition anchors our interpretations. Repetition parallels and enhances those qualities which make poetry distinct from prose.

The material of the research is taken from the works of American outstanding poets such as W. Whitman E. Dickinson and R. Frost. The choice of the material is grounded by the fact that repetition is one of the most powerful means which plays an important role in their poetry. It contributes not only to the rhythmic organization of the text but also reveals the authors' political and social intentions.

The following **objectives** are set forth to achieve the goal of the research:

- to carry out a thorough study of repetition in verbal art and bring out those types which are indispensable elements of the authors' individual style,
- to reveal the linguopoetic peculiarities of repetition in the authors' praise,
- to realize an overall study of repetition on different levels (phonetic, lexical, syntactic),
- to bring out all the possible functions of repetition,
- to demonstrate the similarities and the differences in the source and the target languages through comparative analysis so as to enable the reader to perceive the expressive-emotional-evaluative overtones of piece of literature,
- to reveal and emphasize those non equivalent elements of the target language which hinder the understanding and evaluation of the text.

The actuality of the subject matter is conditioned by the necessity to understand, interpret and evaluate the linguopoetic manifestations of repetition which helps the reader to penetrate into the hidden lines of the poem and underline the importance of understanding the authors' intentions.

The **novelty** of the research is determined by the linguopoetic study of repetition on phonetic, lexical and syntactic levels, the thorough analysis of which shows that both linguistic and extralinguistic factors influence the realization of repetition.

The work has both **theoretical** and **practical values**. As for the theoretical value, it can support the development of the theory of stylistics and poetics, cross-cultural communication and translation studies.

The **practical** significance of the thesis is determined by the fact that the results of the research can be used in Linguostylistics, Text Interpretation, as well as in practical courses of translation.

The application of the linguostylistic and linguopoetic methods of analysis helps to reveal the vital importance of understanding the work of verbal creativity.

The **structure** of the research: The structure of the research flows from the issues touched upon in the research. It consists of an introduction, three chapters, conclusion and bibliography